ՀՀ Արմավիրի մարզի Նոր Արտագերսի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ՝ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Առաջին կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հարկային և ոչ հարկային եկամուտների տեղեկատվական շտեմարանի հետ կապված աշխատանքները:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն,
- իր լիազորությունների հետ կապված իրավակա ակտերի անհրաժեշտ իմացություն,
- համակարգչով և այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակաություն :

  Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
- դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/, դիպլոմի, վկայականի, աշխատանքային գրքույկի /բացակայության դեպքում տեղեկանք համապատասխան մարմնից/, պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին,
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են՝ անձամբ ներկայացնելով անձնագիրը:
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից մինչև 16:00 բացի շաբաթ և կիրակի օրերից Նոր Արտագերսի գյուղապետարանում կամ Արմավիրի մարզպետարանում, Աբովյան փ. 71, հեռ. 6-07-70:
Մրցույթը կկայանա 2012 թվականի դեկտեմբերի 17-ին, ժամը 14:00-ին Նոր Արտագերսի գյուղապետարանում: